ԵՊՀ ՍԹԵՄ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ

Քննաշրջան՝ 2024թ,

Տևողություն՝ 135 րոպե

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

10-րդ դասարան

ԳԾԱԿՈԴԻ ՀԱՄԱՐ

Քննաթերթիկը բաղկացած է երկու մասից՝

Մաս 1 – Ընտրովի պատասխանով հարցեր,

Մաս 2 – Հիմնավորում պահանջող հարցեր:

Հարցերի միավորների ընդհանուր գումարը 40 է:

Մաս առաջին – Ընտրովի պատասխանով հարցեր

(Պատասխանները լրացնել ստորև ներկայացված Պատասխանների աղյուսակում)

ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ ԱՂՅՈՒՍԱԿ

Յուրաքանչյուր պատասխան նշել «X» նշանով համապատասխան հարցի դիմաց: Յուրաքանչյուր ճիշտ պատասխանը գնահատվում է 1 միավոր (միևնույն սյունակի մեկից ավելի վանդակներում ցանկացած նշում համարվում է սխալ, միևնույն սյունակի որևէ վանդակում ոչ մի նշում չկատարելը համարվում է սխալ):

Նմուշ՝

	1	2	3	4
1		X		

ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ ԱՂՅՈՒՍԱԿ

	1	2	3	4
1				
2				
3				
4				
5				
6				
7				
8				
9				
10				
11				
12				
13				
14				
15				

1. Ո՞ր շարքի բոլոր բառերի բաղադրիչներն են գրվում միասին:

1) ձեռք(սեղմում), առ(օրյա), բուք(բորան)
2) վեց(ամյա), փոխ(նախագահ), կողք(կողքի)
3) պար(եղանակ), ի(զորու), փոխե(փոխ)
4) կետ(որս), քսան(հինգ), նոր(արեշցի)

2. Ո՞ր շարքի բոլոր բառերում է գրվում <u>օ</u>:

1) հն-րյա, փայտ-ջիլ, օրեց-ր
2) ան-րեն, օրըստ-րե, օր-րել
3) առ-րյա, ոսկեզ-ծ, մեղմ-րեն
4) նախ-րե, ապ-րինի, ան-թևան

3. Ո՞ր շարքի բոլոր բառերն են կազմությամբ պարզ:

1) մետաքս, դանակ, բյուր
2) սեղան, հյուղ, կառք
3) ծամոն, ծաղիկ, կարաս
4) նկար, համերգ, բանակ

4. Ո՞ր շարքի բոլոր բառերն են ենթարկվում <u>ա</u> ներքին հոլովման:

1) գրություն, ձյուն, շարժում
2) անուն, անկյուն, քավություն
3) շուն, տուն, գարուն
4) արյուն, սյուն, քեռակին

5. Ո՞ր շարքի բոլոր բայերն են դրված եզակի թվով:

1) թառեց, հիշեցրին, փոխում էր
2) սիրում է, բզբզաց, կանչեցի
3) կանգնել ենք, նկարեց, լալիս է
4) գրկում էր, խանձվել էին, լայնացավ

6. Ո՞ր նախադասության մեջ *մակբայ* կա:

1) Ամպերի տակից հանկարծ շողաց արևը:

2) Այդ դեպքը կատարվելու էր տարիներ հետո:

3) Նրա առաջ բացվեց մի զարմանալի տեսարան:

4) Հեռու սարերի կատարներին ձյուն էր նստել:

7. Ո՞ր նախադասությունն է պարզ:

1) Մթնաձորում այժմ էլ թավուտ անտառներ կան, ուր ոչ ոք չի եղել:

2) Ծառերը ընկնում են, փտում, ընկած ծառերի տեղ նորն է ծլում:

3) Հիմա էլ Մթնաձորում մուգ կանաչ մաշկով խլեզներ կան՝ մարդու երես չտեսած, մարդուց երկյուղ չունեցող:

4) Երբ հեռավոր հարթավայրում արևը նոր է թեքվում դեպի մայրամուտ, Մթնաձորում ստվերները թանձրանում են:

8. Ո՞ր տարբերակի թվերի դասավորությունն է ճիշտ նշում «Սասնա ծռեր» /«Սասունցի Դավիթ» համահավաք բնագիր/ ճյուղերի ճիշտ հաջորդականությունը:

ա/ «Մեծ Մհեր»

բ/ «Սանասար և Բաղդասար»

գ/ «Սասունցի Դավիթ»

դ/ «Փոքր Մհեր»

1) գ, բ, ա, դ

2) բ, ա, գ, դ

3) բ, գ, դ, ա

4) գ, ա, բ, դ

9. Նշված հարցադրումներից ո՞րը չկա Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի «Հառաջաբանում»:

1) նկարագրել ժողովրդի կյանքն ու նվիրական զգացումները՝ սերը, բարեկամությունը, ծնողասիրությունը…
2) ներկայացնել կրոնի երկրորդական դերը հայ ժողովրդի գոյության հարցում
3) կենդանություն տալ անձնազոհ հայորդիների գործերին
4) արթնացնել հայոց ազգային արժանապատվության զգացումը

10. Ինչպե՞ս է դասավորվում Նար-Դոսի «Ես և նա» պատմվածքի՝ իրավաբանություն ուսումնասիրող երիտասարդի ճակատագիրը:

1) Սիրո մեջ մերժված երիտասարդին հուսահատությունն ինքնասպանության է հասցնում:
2) Կիսատ թողնելով իր ուսումնառությունը՝ նա վերադառնում է հայրենի քաղաք, որպեսզի վրեժ լուծի սիրած աղջկա ամուսնուց:
3) Հայտնի փաստաբան դառնալով՝ կարողանում է վրեժ լուծել սիրած աղջկանից:
4) Երիտասարդը դառնում է կասկածելի դատեր պաշտպանող իրավաբան և անուղղելի հարբեցող:

11. Ինչո՞վ է ավարտվում Ալեքսանդր Շիրվանզադեի «Արտիստը» պատմվածքը:

1) Լևոնի՝ «Խերսոն» շոգենավով Իտալիա մեկնելով
2) Լուիզայից մերժում ստանալուց հետո Լևոնի՝ հարբեցողությամբ զբաղվելով
3) Լևոնի ինքնասպանությամբ
4) Լևոնի՝ հռչակավոր երաժիշտ դառնալով և այդպես Լուիզայից վրեժխնդիր լինելով

12. Ո՞ր բառն է բաց թողած Վահան Տերյանի «Տխրություն» բանաստեղծության տրված հատվածում:

Սահուն քայլերով, աննշմար որպես քնքուշ մութի թև,

Մի ------ անցավ՝ ծաղիկ ու կանաչ մեղմիվ շոյելով…

1) աղջիկ
2) ուրու
3) անուրջ
4) ստվեր

13. Ո՞ր տողը Միսաք Մեծարենցի «Սիրերգ» /Գիշերն անույշ է, գիշերն հեշտագի՛ն/ բանաստեղծությունից չէ:

1) Համբույրներ կու գան հովեն ու ծովեն
2) Լուսեղեն ճամփեն ես կանցնիմ գինով
3) Համբույրիդ, գիշե՛ր, պատուհանս է բաց
4) Բայց լույսն իմ հոգվույս քիչ-քիչ կը մաշի՛

14. Ի՞նչ էր Սաադիի սիրած աղջկա անունը Ավետիք Իսահակյանի «Սաադիի վերջին գարունը» պատմվածքում:

1) Ասիմաթ
2) Նազիաթ
3) Զեմֆիրա
4) Գյուլնարա

15. Ո՞րն է Հովհաննես Թումանյանի «Փարվանա» բալլադում արծարծված հիմնական գաղափարը:

1) Մերժված սիրո տառապանքը:
2) Կյանքի անցողիկությունը:
3) Հավերժական սիրո ձգտումը:
4) Գործի անմահության գաղափարը:

Մաս 2 – Հիմնավորում/լուծում պահանջող հարցեր

(Պատասխանները գրել յուրաքանչյուր հարցից հետո տրված հատվածներում)

1. **Տրված բառերը տեղադրել բաց թողնված տեղերում՝ ենթարկելով համապատասխան փոփոխությունների /2 միավոր/:**

..... վերականգնում կամ վերանորոգում ենք կիսաքանդ վանքերը՝ դրանք ..... մեր ..... քարե հիշողության արթուն մասունքները, բայց մի՞թե Վարդանի ..... կաղնին պատմական հուշարձան չէր:

(ժողովուրդ, ես, տնկել, համարել)

Պատասխան՝ 1._____ 2. _____

3. _____ 4. _____

2. **Դու՛ս գրիր նախադասության մեջ թույլ տրված քերականական սխալը և ուղղի՛ր /1 միավոր/:**

Հազիվ լուսացավ՝ կեսօր էր դառնում, գալիս է բանվորների հանգստի ժամը, և հանկարծ հնչում է եկեղեցու զանգերը, և արևն անշտապ դեպի մայրամուտ է գլորվում:

Պատասխան՝ սխալ է՝ _____

պետք է լինի՝ _____

3. **Կարդա՛ տեքստը և կատարի՛ր տրված առաջադրանքները:**

I

1. Թափառական Շիդհարը վեր բարձրացրեց մտազբաղ աչքերը, որոնց վրա արևակեզ ճակատի խորշոմներն էին իջել: 2. Եվ տեսավ զարմանքով, որ այն վաղեմի ծանոթ ծովը, որի շառաչուն ափերով ինքն անցել էր մի քանի անգամ իր դարավոր թափառումների ընթացքում, հիմա մի ծարավուտ և տատասկոտ անապատ է դարձել: 3. Եվ տեսավ, որ

նախկին ծովի կանաչ ալիքների փոխարեն, որոնց վրա նավերն էին օրորվում փետուրի պես, հիմա ավազի դեղին ալիքներն են գալարվում անապատային առյուծի բաշերի պես:

4. Եվ նավերի փոխարեն դանդաղ քայլում է քարավանը խուլ ղողանջումով:

5. Մոտեցավ նա քարավանապետին և խլաձայն հարցրեց.

– Ինչքա՞ն ժամանակ է, որ այստեղ անապատ է գոյացել:

6. – Խե՛ղճ ծերուկ, խելքդ թռցրել ես,– ծիծաղեց առաջնորդը:

7. – Ճիշտ եմ ասում, անծանո՛թ բարեկամս, տարիներ առաջ, երբ անցա, այստեղ մի անեզր ծով կար, իսկ հիմա անջուր անապատ է:

8. – Քո աչքերից չի երևում, թե դու խելագար ես: 9. Բայց ի՞նչ անհասկանալի բաներ ես ասում: 10. Մեր պապերի պապերի պապերը ապրել են այստեղ, իսկ այս անապատն աշխարհի սկզբից կար ու կմնա…

II

1. Անցան դարեր, նորից դարեր: 2. Շիդհարը մի անգամ վերստին ուղղվեց դեպի անապատը: 3. Եվ տեսավ, որ երեկվա ամայի անապատում հիմա մի մարդաշատ քաղաք է եռում: 4. Փողոցներում և շուկաներում խռնվում են տղամարդիկ ու կանայք, երեխաները զվարթ խաղ են անում: 5. Մոտեցավ քաղաքի մեծ դռանը և հարցրեց դռնապանին.

– Ի՞նչ շուտ շինեցիք այս քաղաքը:

6. – Ինչպե՞ս թե… շինեցիք: 7. Վաղո՛ւց, վաղո՛ւց գոյություն ունի այս քաղաքը. մեր պապերի պապերի պապերն անգամ չգիտեն, թե ով և երբ գցեց այս քաղաքի հիմքերը: 8. Այս քաղաքն այնքան հին է, որքան աշխարհը:

III

1. Եվ կրկին քայլեց անդուլ դարերի թափառականը: 2. Անցան դարեր: 3. Հիշեց Շիդհարը վաղեմի քաղաքը և ուզեց այցելել: 4. Երբ հասավ նրա սահմաններին, տեսավ, որ քաղաքի տեղը հիմա փռվում է մի դաշտավայր՝ ծաղկավետ և գարնանագեղ: 5. Գետակի ափին պարում էին ու երգում աղջիկները: 6. Եվ հովիվը արածեցնում էր գառների հոտը սրնգի դայլայլների տակ:

7. – Ո՞ւր գնաց այստեղից քաղաքը,– հարցրեց նա հովվին:

8. – Ի՞նչ քաղաք,– ապշեց հովիվը:

9. – Տարիներ առաջ իսկ և իսկ այս կողմերում էի. մի մարդաշատ քաղաք էր եռում այստեղ:

10. Նրա մասին է խոսքս…

IV

1. Հովիվը քար կտրած նայում էր Շիդհարին:

2. – Ի՞նչ սարսափելի բաներ ես ասում. ես քեզ չեմ հասկանում… 3. Մեր պապերի պապերի պապերը, և էլի առաջ, այստեղ իրենց հոտերն են արածեցրել: 4. Այս դաշտը կար աշխարհի սկզբից և կմնա…

5. Եվ նորից քայլեց Շիդհարը: 6. Ձյունաթույր մազերը ալեկոծվում էին նրա մթին ճակատի վրա: 7. Քայլում էր և հոգու խորքում դառնագին խորհում մարդու միամտության և նրա գոյության ակնթարթի վրա և բոլոր իրերի գահավերժ հոսման վրա…

Ըստ Ա. Իսահակյանի

4. **I հատվածի 4-6-րդ նախադասություններից դո՛ւրս գրիր մեկ բառաձև, որի շեշտը նախավերջին վանկի վրա է /1 միավոր/:**

Պատասխան՝ _____

5. **I հատվածից դո՛ւրս գրիր մեկ անկանոն բայ /1 միավոր/**

Պատասխան՝ _____

6. **Քանի՞ բաց վանկ կա *արևակեզ* բառում /1 միավոր/:**

Պատասխան՝ _____

7. **I հատվածից դո՛ւրս գրիր *փշոտ* բառի հոմանիշը /1 միավոր/:**

Պատասխան՝ _____

8. **I հատվածից դո՛ւրս գրիր նախադաս լրացում ունեցող մեկ կոչական՝ լրացման հետ միասին /1 միավոր/:**

Պատասխան՝ _____

9. **I հատվածի 6-9-րդ նախադասություններից դո՛ւրս գրիր մեկ բառ, որը և՛ նախածանց ունի, և՛ վերջածանց /2 միավոր/:**

Պատասխան՝ _____

10. **I հատվածից դո՛ւրս գրիր *ենթադրական եղանակով* դրված մեկ բայ /1 միավոր/:**

Պատասխան՝ _____

11. **I հատվածի 3-րդ բարդ նախադասությունը քանի՞ պարզ նախադասությունից է բաղկացած /2 միավոր/:**

Պատասխան՝ _____

12. **Գրի՛ր I հատվածի 4-րդ նախադասության *ողողանջումով* բառի պաշտոնը /1 միավոր/:**

Պատասխան՝ _____

13. **II հատվածից դո՛ւրս գրիր հականիշ բառերի մեկ զույգ /1 միավոր/:**

Պատասխան՝ _____

14. **II հատվածից դո՛ւրս գրիր երկու մակբայ /1 միավոր/:**

Պատասխան՝ _____

15. **III հատվածից դո՛ւրս գրիր չորս ածական /2 միավոր/:**

Պատասխան՝ _____

16. **III հատվածից դո՛ւրս գրիր անորոշ դերբայը /1 միավոր/:**

Պատասխան՝ _____

17. **III հատվածից դո՛ւրս գրիր պատճառական բայը /1 միավոր/:**

Պատասխան՝ _____

18. **III հատվածի 4-րդ նախադասության մեջ բութը ինչի՞ համար է դրված /2 միավոր/:**

Պատասխան՝ _____

19. **IV հատվածից դո՛ւրս գրիր դարձվածքը /1 միավոր/:**

Պատասխան՝ _____

20. **IV հատվածի 1-4-րդ նախադասություններում դո՛ւրս գրիր մեկ ածական և կազմի՛ր համեմատության աստիճանները /2 միավոր/:**

Պատասխան՝ _____